



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 7987 «02» 05 2019 թ.

ԵՊՀ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նպատակ ունենալով կանոնակարգել ԵՊՀ-ի կողմից աշխատողներին տրամադրվող առողջության ապահովագրման գործընթացը

հրամայում եմ

1. Սահմանել, որ ԵՊՀ-ի կողմից ձեռք բերվող առողջության ապահովագրումը տրամադրվում է ԵՊՀ բոլոր հիմնական աշխատողներին և ԵՊՀ-ում գիտական /գիտատեխնիկական/ աշխատանքներում /ծրագրերում/ ներգրավված անձանց (այսուհետ՝ աշխատող):

2. Սահմանել, որ ԵՊՀ աշխատողի առողջության ապահովագրությունը ընդհատվում է աշխատողի ԵՊՀ-ի հետ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու կամ աշխատողի մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում:

3. ԵՊՀ աշխատողների առողջության ապահովագրության կազմակերպական աշխատանքները՝ ապահովագրական ընկերությանը անհրաժեշտ տվյալների տրամադրումը, ապահովագրական քարտերի տրամադրում աշխատողներին, հարցերի և բողոքների պարզաբանումը իրականացվում է ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կողմից (համաձայնությամբ):

4. Հանձնարարել ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությանը մեկ շաբաթյա ժամկետում ԵՊՀ արհեստակցական կազմակերպությանը տրամադրել առողջության ապահովագրության ենթակա աշխատողների ցանկը և անհրաժեշտ այլ տվյալները /ապահովագրական ընկերության կողմից սահմանված ձևաչափով/: ԵՊՀ-ի աշխատողների աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու կամ նոր աշխատողների աշխատանքի ընդունման մասին տեղեկատվությունը՝ այդ իրավահարաբերությունները ծագելուց հետո եռօրյա ժամկետում տրամադրել ԵՊՀ արհեստակցական կազմակերպությանը:

5. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ռեկտոր՝

Ա. Սիֆոնյան